ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 478-Ն | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 2016.05.25/40(1220) Հոդ.429 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 12.05.2016 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 16.05.2016 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 04.06.2016 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1039-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2016 թվականի N 478-Ն

### ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1039-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Բույսերի պաշտպանության միջոցների պետական գրանցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 8-ի N 12 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1039-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Հ. Աբրահամյան**

2016 թ. մայիսի 16
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2016 թվականի**
**մայիսի 12-ի N 478-Ն որոշման**

# Կ Ա Ր Գ

## ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման համար լիազոր մարմին է ներկայացվում հայտ՝ «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան: Հայտը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային տարբերակով՝ լիազոր մարմնի պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

3. Հայտն ստանալուց հետո երեք օրվա ընթացքում՝ լիազոր մարմինն ուսումնասիրում է հայտին կից փաստաթղթերի ցանկի ամբողջականությունը և այն հանձնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 908-Ն որոշմամբ ստեղծված հանձնաժողովի քարտուղարին, վերջինս էլ երեք օրվա ընթացքում դրանք տրամադրում է հանձնաժողովի անդամներին: Եթե հայտին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա լիազոր մարմինը հայտն ստանալուց հետո երեք օրվա ընթացքում այն վերադարձնում է հայտատուին՝ վերջինիս կողմից փաստաթղթերի ցանկը համալրելու և կրկին ներկայացնելու նպատակով:

4. Հանձնաժողովը 18-օրյա ժամկետում քննարկում է պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար ներկայացված հայտը, դրան կից փաստաթղթերը և լիազոր մարմնին է տալիս պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման մասին եզրակացություն:

5. Ներկայացված փաստաթղթերում այն անճշտությունների, վրիպակների կամ թերությունների առկայության դեպքում, որոնք կրում են տեխնիկական բնույթ և չեն ներառում որակական հատկանիշներ հանձնաժողովի անդամներն իրենց դիտողությունները գրավոր ներկայացնում են հանձնաժողովի քարտուղարին՝ հայտատուին փոխանցելու և վերջինիս կողմից շտկումներ կատարելու և կրկին ներկայացնելու նպատակով:

6. Լիազոր մարմինը պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար հանձնաժողովի դրական եզրակացությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում ընդունում է որոշում պեստիցիդի և ագրոքիմիկատի գրանցման և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու մասին և հայտատուին տալիս է սույն որոշման հավելվածի N 1 ձևով կամ N 2 ձևով հաստատված գրանցման վկայական:

7. Հանձնաժողովը պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար տալիս է բացասական եզրակացություն, եթե այն ներառում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 17-ի N 293-Ն որոշման հավելվածով սահմանված նյութերից որևէ մեկը:

8. Լիազոր մարմինը հանձնաժողովի բացասական եզրակացությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում ընդունում է որոշում պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցումը մերժելու վերաբերյալ և դրա մասին տեղեկացնում հայտատուին: Գրանցումը մերժելու վերաբերյալ որոշումը պետք է ներառի նաև մերժման հիմքերը:

9. Լիազոր մարմնի՝ պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցումը մերժելու վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել վերադասության և (կամ) դատական կարգով:

10. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների վերագրանցումն իրականացվում է «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 12-րդ մասի հիմքով՝ դրանց գրանցման կարգին համապատասխան, իսկ վերագրանցման հայտը կարող է ներկայացվել գրանցման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 1 ամիս առաջ:

11. Պեստիցիդները և ագրոքիմիկատները գրանցումից հանվում են «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 14-րդ մասի հիմքով՝ առանց հանձնաժողովի եզրակացության:

12. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստը:

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

**Ձև 1**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն**
**ՊԵՍՏԻՑԻԴԻ ԳՐԱՆՑՄԱՆ**

**N _____**

Սույն վկայագիրը տրվում է _____
(արտադրող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

_____ -ին

Գրանցման ներկայացնողը _____
(կազմակերպության կամ ֆիզիկական անձի անվանումը, գտնվելու վայրը, հասցեն)

Համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի

___ _____20__թ. N____ հրամանի _____

_____
(պեստիցիդի անվանումը, ազդող նյութը, ազդող նյութի քանակությունը պատրաստուկի մեջ, պատրաստուկային ձևը)

պեստիցիդը գրանցված է պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցամատյանում՝ N_____ և ընդգրկված է Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում:

_____ _____ 20_____ թ.
(վկայական տալու ամսաթիվը)

_____ _____ 20_____ թ.
ուժի մեջ է մինչև

ՀՀ գյուղատնտեսության նախարարության
սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության պետ _____
(ստորագրությունը)

Կ. Տ.

**Ձև 2**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն**

**ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏԻ ԳՐԱՆՑՄԱՆ**

**N _____**

Սույն վկայագիրը տրվում է _____

(արտադրող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

_____ -ին

Գրանցման ներկայացնողը _____

(կազմակերպության կամ ֆիզիկական անձի անվանումը, գտնվելու վայրը, հասցեն)

Համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի

___ _____20__թ. N____ հրամանի _____

_____

(ագրոքիմիկատի անվանումը, ազդող նյութը, ազդող նյութի քանակությունը պատրաստուկի մեջ, պատրաստուկային ձևը)

ագրոքիմիկատը գրանցված է պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցամատյանում՝ N_____ և ընդգրկված է Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում:

_____ _____ 20_____ թ.

(վկայական տալու ամսաթիվը)

_____ _____ 20_____ թ.

ուժի մեջ է մինչև

ՀՀ գյուղատնտեսության նախարարության
սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության պետ _____

(ստորագրությունը)

Կ. Տ.